



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 03Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2020 թվականի հուլիսի 31-ի նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամներ ընտրելու վերաբերյալ հարցը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 77-րդ հոդվածի 1-ի և 4-րդ մասերով, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 25.03.2020թ. թիվ ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքի 58-րդ հոդվածի 8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի 2018 թվականի մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 02Լ որոշման հավելված 1-ի 75-76.1 և 53-70-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Ձևավորել Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամներ.

1) Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր Ելիզավետա Դանիելյան՝ 4 տարի ժամկետով,

2) Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Սերգեյ Մարաբյան՝ 4 տարի ժամկետով,

3) Սնանկության դատարանի դատավոր Լիլիթ Կատվալյան՝ 4 տարի ժամկետով,

4) Վարչական դատարանի դատավոր Մերի Համբարձումյան՝ 3 տարի ժամկետով,

5) Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներից (քաղաքացիական մասնագիտացմամբ)՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հովիկ Շահնազարյան՝ 3 տարի ժամկետով,

6) Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներից (քրեական մասնագիտացմամբ)՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արման Հովհաննիսյան՝ 3 տարի ժամկետով:

2. Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամներ.

1) Սյուզաննա Սողոմոնյան՝ 4 տարի ժամկետով,

2) Դավիթ Հակոբյան՝ 3 տարի ժամկետով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

2020թ. հուլիսի 31
ք.Երևան